«1. Հոգևոր եկեղեցական-ծխական դպրոցների կայքերն ու գոյքերը և նրանց շինքերը պետականացվում են, եթէ նրանց դպրոցը բացած չլինի այս օրէնքի հրատարակման օրը, կամ բացվելուց յետոյ փակվի և կամ, եթէ նա Հայաստանի պետական դանձարանից նպաստ է ստացել:

2. Պետականացվող կայքերն ու գոյքերը և նրանց շինքերը յանձնվում են հանրային կրթութեան և արուեստի նախարարութեան, որը ծառայեցնում է նրանց դպրոցական նպատակների համար:

3. Որոշ պայմաններով և նպատակներով կտակված կամ յատկացված և այս օրէնքի ուժով պետականացվող կայքերը, գոյքերն ու շինքերը անցնում են հանրային կրթութեան և արուեստի նախարարութեան այն պայմանով, որ վերջինս կատարում է կտակողների և յատկացնողների կամքը անշեղ»:

Ապրիլին ընդունվեց մի ուրիշ օրինագիծ տարրական կրթութեան մասին.

«1. Պետական դպրոցներում տարրական կրթությունը վեցամեայ տևողություն ունի, որ բաժանվում է երկու եռամեակների:

2. Տարրական դպրոցներում աւանդվում են հետևեալ առարկաները. հայոց լեզու, թուաբանություն, պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, առողջապահիկ գիտելիքներ, երգեցողություն, նկարչություն, մարմնամարզ և ձեռքի աշխատանք ըստ հանրային կրթութեան և արուեստի նախարարութեան մշակած ծրագրի և կազմած դասաբաշխման տախտակի:

Ծանօթություն. Այլազգի դպրոցներում պետական լեզուն աւանդվում է, ըստ համայնքի ցանկութեան, սկսած ուսման երրորդ տարուանից:

3. Այն գիւղերում, որ այսօր բաւարար թվով դպրոցական հասակի մանուկներ չունեն, բացվում են եռամեայ դասընթացով դպրոցներ:

4. Կենտրոնական գիւղերում բացվում են վեցամեայ դասընթացով դպրոցներ նոյն և մերձաւոր գիւղերի աշակերտութեան համար:

5. Այն սաների համար, որ հնար չունեն վեցամեայ դպրոց յաճախելու կամ վեցամեան աւարտելով՝ միջնակարգ դպրոց անցնելու, համապատասխան դպրոցներում բացվում են չորրորդ և եօթերորդ լրացուցիչ դասարաններ»:

Մարտ 28-ին Դրամատիկական Դասընթացները տվին իրենց անդրանիկ երեկոյթը՝ դասընթացների վարիչ դերասան Վ. Միրզոյեանի առաջնորդությամբ: Հանդէսը անցաւ մեծ յաջողությամբ: Դասընթացների մի շարք ուսանողներ, որոնց մէջ և երիտասարդ դերասան Մ. Մարությանը, աչքի ընկան իրենց շնորհալի խաղով:

Ապր. 18-ին բոյ-սկաուտների օր էր Երևանում: Քաղաքը ստացել էր տօնական տեսք: Փողոցներում տուփերով հանգանակություն էր կատարվում: Բոյ-սկաուտները երաժշտությամբ կենդանություն էին մտցնում ամէն կողմ: Ամառնային ակումբում տեղի ունեցաւ հրապարակային մարզանք: Բոյ-սկաուտները, իրենց վարիչ հունդարացի Ալբերտ Սեդմայի առաջնորդությամբ, զեղեցիկ խաղեր խաղացին՝ արժանանալով խունած հասարակության խանդավառ ծափերին: Սկաուտական շարժումը հանրային կրթութեան նախարարութեան դուրգուրանքի առարկայ էր և շուտով լայն ծաւալ ստացաւ Հայաստանում, մանաւանդ, երբ արտասահմանից հասան փորձված զեկավար մարզիկներ՝ Վ. Զերազ, Խոյեան և այլն: